

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2008 թվականի հունիսի 17-ի թիվ 689/2008/ ԵՀ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման մասին

(ՊՏ L 204, 31.07.2008թ., էջ 1)

Փոփոխված՝

	Պաշտոնական տեղեկագիր		
	թիվ	էջ	ամսաթիվ
Հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 7-ի L 6 թիվ 15/2010/ԵՄ կանոնակարգով		1	9.01.2010թ.
Հանձնաժողովի 2010 թվականի մարտի 9-ի թիվ L 60 196/2010/ԵՄ կանոնակարգով		5	10.03.2010թ.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2008 թվականի հունիսի 17-ի թիվ 689/2008/ԵՀ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 133-րդ հոդվածն ու 175(1) հոդվածը,
հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,
հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը(1),
Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո
գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (2),
Քանի որ

- 1) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի թիվ 304/2003/ԵՀ «Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման մասին» կանոնակարգի հիման վրա միջազգային առևտրում իրականացվել է «Որոշակի վտանգավոր քիմիական նյութերի և թունաքիմիկատների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին» Ռոտերդամի կոնվենցիան, այսուհետ՝ «Կոնվենցիա», որն ուժի մեջ է մտել 2004 թվականի փետրվարի 24-ին և փոխարինել է Խորհրդի 1992 թվականի հուլիսի 23-ի թիվ 2455/92/ԵՏՀ «Որոշակի

քիմիական քիմիական նյութերի արտահանման և ներմուծման մասին» կանոնակարգին (5),

2) C-178/03 գործում 2006 թվականի հունվարի 10-ի իր վճռում (*Հանձնաժողովն ընդդեմ Պառլամենտի և Խորհրդի*) ([6](#)), Եվրոպական համայնքների արդարադատության դատարանն անվավեր է ճանաչել թիվ 304/2003/ԵՀ կանոնակարգը, քանի որ այն բացառապես հիմնված է Պայմանագրի 175(1) հոդվածի վրա, վճիռ կայացնելով, որ 133-րդ հոդվածը և 175(1) հոդվածը պատշաճ իրավական հիմքեր են: Այնուհանդերձ, Դատարանը նաև վճիռ է կայացրել, որ Կանոնակարգը գործում է մինչ խելամիտ ժամկետներում պատշաճ իրավական հիմքերի վրա հիմնված նոր կանոնակարգի ընդունումը: Վերը նշվածը ենթադրում է, որ հարկ չկա, որպեսզի թիվ 304/2003/ԵՀ կանոնակարգի համաձայն արդեն կատարված պարտավորությունները կրկին կատարվեն,

3) թիվ 304/2003/ԵՀ կանոնակարգի համաձայն՝ Հանձնաժողովը 2003 թվականից 2005 թվականը թիվ 304/2003/ԵՀ կանոնակարգի գործողության մասին Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ զեկույց է ներկայացնում: Ընդհանուր առմամբ, ընթացակարգերն արդյունավետորեն են իրականացվել: Այնուհանդերձ, զեկույցում նշված են մի շարք տեխնիկական փոփոխություններ, որոնք անհրաժեշտ է կատարել: Այսպիսով, նպատակահարմար է այդ տարրերը ներմուծել սույն Կանոնակարգում,

4) Կոնվենցիան կողմերին իրավունք է վերապահում այնպիսի գործողություն ձեռնարկել, որն ավելի խստորեն է պաշտպանում մարդու առողջությունը և շրջակա միջավայրը, քան Կոնվենցիայով նախատեսվող գործողությունը՝ պայմանով, որ նման գործողությունը համապատասխանում է սույն Կոնվենցիայի դրույթներին և համապատասխանում է միջազգային իրավունքին: Թիվ 2455/92/ԵՏՀ կանոնակարգի համաձայն՝ շրջակա միջավայրին և ներմուծող երկրների լայն հասարակությանը տրամադրված պաշտպանության մակարդակը չթուլացնելու նպատակով որոշ առումներով անհրաժեշտ և նպատակահարմար է ընդլայնել Կոնվենցիայի դրույթները,

5) Կոնվենցիայում Համայնքի մասնակցության առումով անհրաժեշտ է Քարտուղարության և Կոնվենցիայի այլ Կողմերի, ինչպես նաև այլ երկրների հետ Համայնքի փոխգործողության համար «մեկ պատուհանի» սկզբունքով գործող կոնտակտային կետ ունենալ: Հանձնաժողովը պետք է գործի որպես նման կոնտակտային կետ,

6) Համայնքի տարածքում արգելված կամ խիստ սահմանափակված վտանգավոր քիմիական նյութերի արտահանումը պետք է շարունակվի իրականացվել արտահանման մասին ծանուցման ընդհանուր ընթացակարգով: Հետևաբար, վտանգավոր քիմիական նյութերը՝ կամ պարզ նյութերի կամ էլ պատրաստուկների կամ արտադրանքի տեսքով, որոնք Համայնքի կողմից արգելվել կամ խստիվ սահմանափակվել են՝ որպես բույսերի պաշտպանության միջոցներ, որպես թունաքիմիկատների այլ ձևեր կամ որպես արդյունաբերական քիմիկատներ՝ պրոֆեսիոնալ օգտագործողների կամ հանրության կողմից օգտագործման համար պետք է ենթարկվեն արտահանման մասին ծանուցման կանոններին, որոնք նման են նմանատիպ քիմիական նյութերի նկատմամբ կիրառվող

կանոններին, երբ դրանք արգելվում կամ խստիվ սահմանափակվում են Կոնվենցիայում սահմանված օգտագործման կատեգորիաներում կամ դրանցից որևէ մեկում, կոնկրետ որպես թունաքիմիկատներ կամ արդյունաբերական օգտագործման համար քիմիական նյութեր: Բացի դրանից՝ միջազգային նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մեջ ընդգրկված քիմիական նյութերը նույնպես պետք է ենթարկվեն միննույն կանոններին: Արտահանման մասին ծանուցման սույն ընթացակարգը կիրառվում է բոլոր երրորդ երկրներ կատարվող Համայնքի արտահանումների նկատմամբ, անկախ այն փաստից, թե դրանք Կոնվենցիայի Կողմեր են, թե մասնակցում են դրա ընթացակարգերում: Անդամ պետությունները կարող են վարչական վճարներ գանձել՝ տվյալ ընթացակարգն իրականացնելու գործում իրենց ծախսերը ծածկելու համար,

7) Արտահանողները և ներմուծողները պարտավոր են սույն Կանոնակարգով նախատեսվող միջազգային առևտրում քիմիական նյութերի քանակության վերաբերյալ տեղեկություններ տրամադրել, որպեսզի այնտեղ սահմանված միջոցառումների ազդեցությունը և արդյունավետությունը հնարավոր լինի ենթարկել մոնիտորինգի և գնահատել,

8) Կոնվենցիայի քարտուղարությանը Համայնքի կամ անդամ պետությունների վերջնական կարգավորիչ գործողությունների մասին ծանուցումները, որոնցով արգելվում կամ խստիվ սահմանափակվում են քիմիական նյութերը՝ միջազգային նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգում դրանք ներառելու նպատակով, պետք է ներկայացվեն Հանձնաժողով և այս մասով առնչվում են Կոնվենցիայում սահմանված չափանիշները բավարարող դեպքերի հետ: Անհրաժեշտության դեպքում այդ ծանուցումներին կից հարկավոր է լրացուցիչ տեղեկություններ ներկայացնել:

9) Եթե Համայնքի կամ անդամ պետության վերջնական կարգավորիչ գործողությունների մասին չի ծանուցվում՝ չափանիշներին չհամապատասխանելու պատճառով, գործողություններին վերաբերող տեղեկատվությունն այնուհանդերձ ներկայացվում է Կոնվենցիայի Քարտուղարություն և Կոնվենցիայի Կողմերին՝ տեղեկատվության փոխանակման շահերից ելնելով,

10) անհրաժեշտ է նաև ապահովել, որ Համայնքը քիմիական նյութերը Համայնք ներմուծելու մասին որոշումներ կայացնի, որոնք ընդգրկված են միջազգային նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգում: Այդ որոշումները պետք է հիմնված լինեն Համայնքի կիրառվող օրենսդրության վրա և հաշվի առնվեն անդամ պետությունների կողմից սահմանված արգելքները կամ խիստ սահմանափակումները: Արդարացված լինելու դեպքում Համայնքի օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու մասով առաջարկություն է ներկայացվում,

11) անհրաժեշտ են միջոցառումներ, որոնք կապահովեն, որ անդամ պետությունները և արտահանողներն իրազեկ լինեն քիմիական նյութերի մասով ներմուծող երկրների որոշումների մասին, որոնք ընդգրկված են միջազգային նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգում և, որ արտահանողները ենթարկվում են այդ

որոշումներին: Ավելին, ոչ ցանկալի արտահանումները կանխելու նպատակով ոչ մի քիմիական նյութ, որն արգելված կամ խստիվ սահմանափակված է Համայնքի տարածքում, որը բավարարում է Կոնվենցիայի չափանիշներին կամ որն ընդգրկված է միջազգային նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգում, չի արտահանվում, եթե շահագրգիռ ներմուծող երկրի ուղղակի համաձայնությունն է պահանջվում և ստացվում, անկախ նրանից, թե այդ երկիրը Կոնվենցիայի Կողմ է, թե ոչ: Միաժամանակ այդ պարտավորությունը կատարելուց հրաժարումը նպատակահարմար է այն երկրներ կատարվող որոշակի քիմիական նյութերի արտահանումների մասով, որոնք Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամներ են՝ պայմանով, որ որոշակի նախապայմաններ բավարարվում են: Ավելին, անհրաժեշտ է ընթացակարգ՝ ուսումնասիրելու այն դեպքերը, որտեղ, անկախ բոլոր անհրաժեշտ միջոցներից, արտահանող երկրից ոչ մի պատասխան չի ստացվում, ուստի որոշակի քիմիական նյութերի արտահանումները կարող են ընթանալ ժամանակավոր հիմքերով՝ որոշակի պայմանների համաձայն: Անհրաժեշտ է նաև բոլոր նման դեպքերը, ինչպես նաև նրանք, որոնց ժամանակ ուղղակի համաձայնություն է ձեռք բերվում, ենթարկել պարբերաբար ստուգման,

12) Հանձնաժողովի կողմից սահմանված տվյալների շտեմարանը կարևոր գործիք է, որը պետք է հիմք ծառայի սույն Կանոնակարգի կիրառման և դրա հսկողության համար,

13) կարևոր է նաև, որպեսզի արտահանված բոլոր քիմիական նյութերն ունենան համարժեք պիտանիության ժամկետ՝ դրանք արդյունավետորեն և անվտանգորեն օգտագործելու նպատակով: Ինչ վերաբերում է թունաքիմիկատներին, մասնավորապես և հատկապես նրանց, որոնք արտահանվում են զարգացող երկրներ, կարևոր է, որ տեղեկություններ տրամադրվեն՝ պատշաճ պահպանման պայմանների մասին և որ կիրառվեն հարմար փաթեթավորումներ և տարաների չափեր՝ ապրանքների հին տեսականիների առաջացումից խուսափելու նպատակով,

14) քիմիական նյութեր պարունակող արտադրանքը չի մտնում Կոնվենցիայի գործողության ոլորտի մեջ: Այնուհանդերձ, նպատակահարմար է, որ քիմիական նյութեր պարունակող արտադրանքը, որը կարող է թողարկվել օգտագործման կամ տնօրինման որոշակի պայմանների ներքո և, որը արգելված կամ խստիվ սահմանափակված է Համայնքում՝ կոնվենցիայում սահմանված կատեգորիաների օգտագործումներից որևէ մեկում կամ մի քանիսում կամ ընդգրկված է միջազգային նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգում, պետք է նաև ենթարկվի արտահանումների մասին ծանուցման կանոններին: Ավելին, Կոնվենցիայի գործողության ոլորտից դուրս որոշակի քիմիական նյութերը և կոնկրետ քիմիական նյութեր պարունակող արտադրանքը, սակայն, մտահոգության տեղիք է տալիս, ընդհանրապես չի արտահանվում,

15) Կոնվենցիայի համաձայն՝ միջազգային նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգում ընդգրկված քիմիական նյութերի տարանցիկ տեղաշարժի մասին տեղեկությունները ներկայացվում են Կոնվենցիայի այն Կողմերին, որոնք նման տեղեկություններ են պահանջում,

16) փաթեթավորման և պիտակավորման ու անվտանգության մասին այլ տեղեկությունների վերաբերյալ Համայնքի կանոնները կիրառվում են բոլոր վտանգավոր քիմիական նյութերի նկատմամբ, որոնք նախատեսված են Կողմերի տարածք և այլ երկրներ արտահանելու համար, եթե այդ դրույթները հակասում են այդ երկրների կողմից ներկայացվող կոնկրետ պահանջներին՝ հաշվի առնելով համապատասխան միջազգային ստանդարտները,

17) կանոնների արդյունավետ հսկողություն և կիրառում ապահովելու նպատակով անդամ պետությունները նշանակում են մարմիններ, ինչպես օրինակ՝ մաքսային մարմիններ, որոնք սույն Կանոնակարգով կարգավորվող քիմիական նյութերի ներմուծումների և արտահանումների հսկողության պատասխանատվություն են կրում: Հանձնաժողովը և անդամ պետություններն առանցքային դեր են կատարում և գործում են նպատակաուղղված ու համակարգված կերպով: Անդամ պետությունները խախտումների դեպքում նախատեսում են համապատասխան պատժամիջոցներ: Արտահանողների և մաքսային մարմինների համար մաքսային հսկողությունը դյուրացնելու և վարչական բեռը նվազեցնելու նպատակով արտահանման հայտարարագրման գործընթացում կիրառվելիք կանոնների հետ համապատասխանությունը հաստատող ծածկագրերի համակարգ է սահմանվում: Թույլ տալու համար բոլոր կողմերին հարմարվել այս համակարգին մինչ դրա պարտադիր դառնալը, կարճատև անցումային ժամանակահատված է նախատեսվում,

18) Համայնքի և անդամ պետությունների ու երրորդ երկրների միջև տեղեկատվության փոխանակումը, կոլեկտիվ պատասխանատվությունը և համագործակցային ջանքերը խթանվում են՝ ապահովելու համար քիմիական նյութերի արդյունավետ կառավարում՝ անկախ նրանից, թե այդ երրորդ երկրները Կոնվենցիայի Կողմեր են, թե ոչ: Մասնավորապես, զարգացող երկրներին և անցումային տնտեսություններով երկրներին տեխնիկական աջակցություն է տրամադրվում ուղղակի Հանձնաժողովի ու անդամ պետությունների կողմից կամ անուղղակի՝ հասարակական կազմակերպությունների կողմից՝ ծրագրերին օժանդակության միջոցով, հատկապես այնպիսի օժանդակություն, որի նպատակը հնարավորություն տալն է այդ երկրներին՝ իրականացնելու Կոնվենցիան,

19) ընթացակարգերի աշխատանքը պարբերաբար ենթարկվում է մոնիտորինգի՝ դրանց արդյունավետությունն ապահովելու նպատակով: Այդ իսկ նպատակով անդամ պետություններն ընթացիկ զեկույցներ են ներկայացնում Հանձնաժողով, որոնք իրենց հերթին պարբերաբար զեկուցում են Եվրոպական պառլամենտին և Խորհրդին,

20) անհրաժեշտ է մշակել տեխնիկական ուղեցույց՝ իրավասու մարմիններին օժանդակելու համար, այդ թվում նաև՝ այնպիսի մարմինների, ինչպես օրինակ՝ արտահանումները վերահսկող մաքսային մարմինները՝ սույն Կանոնակարգի կիրառման հարցում,

21) սույն Կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան, որով սահմանվում են Հանձնաժողովին վերապահված՝ կատարման լիազորությունների

իրականացման ընթացակարգերը (7),

22) Հանձնաժողովը, մասնավորապես, լիազորված է ընդունել միջոցներ՝ Համայնքի մակարդակով վերջնական կարգավորիչ գործողությունից հետո ներառելու I հավելվածի 1-ին կամ 2-րդ մասերում քիմիական նյութ, միջոցներ՝ ներառելու այնպիսի քիմիական նյութ, որը ենթակա է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 850/2004 «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կանոնակարգի V հավելվածի 1-ին մասին, ինչպես նաև միջոցներ՝ փոփոխելու I հավելվածը, այդ թվում նաև միջոցներ՝ առկա մուտքագրումներում փոփոխությունները, V հավելվածի 2-րդ մասում Համայնքի մակարդակով արտահանման արգելքին արդեն ենթակա քիմիական նյութ ներառելու համար, միջոցներ՝ II, III, IV և VI հավելվածները փոփոխելու համար և միջոցներ՝ V հավելվածում առկա մուտքագրումները փոփոխելու համար: Քանի որ այդ միջոցներն ընդհանուր շրջանակ են ներկայացնում և նախատեսված են սույն Կանոնակարգում ոչ էական տարրերը փոփոխելու համար, դրանք ընդունվում են՝ թիվ 1999/468/ԵՇ որոշման 5ա հոդվածով նախատեսվող՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգի համաձայն,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Նպատակները

1. Սույն Կանոնակարգի նպատակները հետևյալն են՝

ա) իրականացնել Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և թունաքիմիկատների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին Ռոտերդամի կոնվենցիան, այսուհետ՝ «Կոնվենցիա»,

բ) խթանել մարդու առողջությունը և շրջակա միջավայրը հնարավոր վնասներից պաշտպանելու նպատակով վտանգավոր քիմիական նյութերի միջազգային տեղաշարժման մասով կողեկոտիվ պատասխանատվությունը և համագործակցային ջանքերը,

գ) նպաստել վտանգավոր քիմիական նյութերի էկոլոգիապես անվնաս օգտագործմանը:

Առաջին ենթապարբերությունում նշված նպատակներին հասնում են այդ քիմիական նյութերին վերաբերող տեղեկատվության փոխանակումը դրուրացնելու, իրենց ներմուծման ու արտահանման շուրջ Համայնքի ներսում որոշումների ընդունման գործընթացը նախատեսելու և, անհրաժեշտության դեպքում, Կողմերին ու մյուս երկրներին որոշումները տարածելու միջոցով:

2. Ի հավելումն 1-ին պարբերության մեջ նշված նպատակների՝ սույն Կանոնակարգն ապահովում է, որ Խորհրդի թիվ 67/548/ԵՏՀ (9) հրահանգի ու Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1999/45/ԵՇ հրահանգի (10) դրույթները մարդու և շրջակա միջավայրի համար վտանգավոր այն քիմիական նյութերի դասակարգման, փաթեթավորման ու պիտակավորման մասին, երբ դրանք դուրս են բերվում Համայնքի շուկա, նույնպես կիրառվեն բոլոր նման քիմիական նյութերի նկատմամբ, երբ դրանք արտահանվում են անդամ պետություններից այլ Կողմերի տարածք կամ այլ երկրներ, եթե այդ դրույթները չեն հակասում այդ Կողմերի կամ այլ երկրների կողմից ներկայացվող կոնկրետ պահանջներին:

Հոդված 2

Գործողության ոլորտը

1. Սույն Կանոնակարգը կիրառվում է հետևյալի նկատմամբ՝

ա) որոշակի վտանգավոր քիմիական նյութերի նկատմամբ, որոնք ենթակա են Կոնվենցիայի համաձայն՝ նախնական համաձայնեցված համաձայնության ընթացակարգին, այսուհետ՝ «ՆՀՀ ընթացակարգ»,

բ) որոշակի վտանգավոր քիմիական նյութերի նկատմամբ, որոնք արգելված կամ խստիվ սահմանափակված են Համայնքի կամ անդամ պետությունների տարածքում,

գ) արտահանվող քիմիական նյութերի նկատմամբ, եթե խոսքը դրանց դասակարգման, փաթեթավորման և պիտակավորման մասին է:

2. Սույն Կանոնակարգը չի կիրառվում ստորև նշվածներից ոչ մեկի նկատմամբ՝

ա) «Թմրանյութերի պրեկուրսորների Համայնքի և երրորդ երկրների միջև առևտրի մոնիտորինգի համար կանոններ սահմանելու մասին» Խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 111/2005/ԵՀ կանոնակարգով նախատեսվող թմրադեղերի և հոգեներգործուն նյութերի նկատմամբ,

բ) «Իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգների դեմ աշխատողների և հասարակության առողջության պաշտպանության համար անվտանգության հիմնական ստանդարտներ սահմանելու մասին» Խորհրդի 1996 թվականի մայիսի 13-ի 96/29/Եվրատոմ հրահանգով նախատեսվող ռադիոակտիվ նյութերի և այլ նյութերի նկատմամբ,

գ) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5-ի թիվ 2006/12/ԵՀ «Թափոնների մասին» հրահանգով ([13](#)) և Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 91/689/ԵՏՀ «Վտանգավոր թափոնների մասին» հրահանգով ([14](#)) նախատեսվող թափոնների նկատմամբ,

դ) «Երկակի նշանակությամբ ապրանքների և տեխնոլոգիայի արտահանումների վերահսկողության համար Համայնքի ռեժիմ սահմանելու մասին» Խորհրդի 2000 թվականի հունիսի 22-ի թիվ 1334/2000/ԵՀ կանոնակարգով նախատեսվող քիմիական զենքի նկատմամբ,

ե) «Անասնակերի և սննդի մասին» օրենսդրության, կենդանիների առողջության և կենդանիների բարեկեցության մասին կանոնների հետ համապատասխանության ստուգումն ապահովելու նպատակով կատարվող պաշտոնական վերահսկողությունների մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 882/2004/ԵՀ կանոնակարգով ([16](#)) նախատեսվող սննդամթերքի ու սննդային հավելումների նկատմամբ,

զ) Սննդի մասին օրենսդրության ընդհանուր սկզբունքները և պահանջները սահմանելու, «Սննդի անվտանգության եվրոպական մարմնի ստեղծման և սննդամթերքի անվտանգության հարցերում ընթացակարգեր սահմանելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հունվարի 28-ի թիվ 178/2002/ԵՀ կանոնակարգով նախատեսվող անասնակերի, այդ թվում նաև՝ լրացակերների նկատմամբ, թե մշակված, մասամբ մշակված կամ չմշակված, որոնք նախատեսված են կենդանիների ներքին ընդունման համար,

է) «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների՝ շրջակա միջավայր կանխամտածված արտանետման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի մարտի 12-ի թիվ 2001/18/ԵՀ հրահանգով ([18](#)) նախատեսվող՝ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների նկատմամբ,

ը) բացառությամբ սույն Կանոնակարգի 3(4)(բ) հոդվածով նախատեսվող դեպքերի, «Մարդու օգտագործման համար դեղագործական արտադրանքին վերաբերող Համայնքի ծածկագրի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 2001/83/ԵՀ հրահանգով (19) ու անասնաբուժական դեղագործական արտադրանքին վերաբերող Համայնքի ծածկագրի մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 2001/82/ԵՀ հրահանգով (20) նախատեսվող արտոնագրված դեղագործական արտադրանքի ու անասնաբուժական դեղագործական արտադրանքի նկատմամբ,

թ) քիմիական նյութերի նկատմամբ, այն քանակությամբ, որը չի ազդում մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա և ցանկացած դեպքում ոչ ավելի, քան 10 կգ՝ պայմանով, որ դրանք արտահանվում կամ ներմուծվում են հետազոտությունների կամ անալիզների նպատակով:

Հոդված 3

Սահմանումները

Սույն Կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «քիմիական նյութ» նշանակում է, ինչպես սահմանված է թիվ 67/548/ԵՏՀ հրահանգով, կամ քիմիական տարրեր կամ պատրաստուկներ, կամ բնական կամ արհեստական պատրաստուկներ, սակայն չի ներառում այն կենդանի օրգանիզմները, որոնք պատկանում են ստորև նշված կատեգորիաներից որևէ մեկին՝

ա) թունաքիմիկատներ, այդ թվում՝ խիստ վտանգավոր թունաքիմիկատային խառնուրդներ,

բ) արդյունաբերական քիմիկատներ,

2. «պատրաստուկ» նշանակում է մեկ կամ մի քանի նյութերից բաղկացած խառնուրդ կամ լուծույթ,

3. «արտադրանք» նշանակում է քիմիական նյութ պարունակող կամ ներառող պատրաստի արտադրանք, որի օգտագործումն արգելվել կամ խիստ սահմանափակվել է Համայնքի օրենսդրությամբ այդ կոնկրետ արտադրանքի մասով,

4. «թունաքիմիկատներ» նշանակում է ստորև նշված ենթակատեգորիաներից մեկով քիմիական նյութեր՝

ա) Բույսերի պաշտպանության միջոցները շուկա դուրս բերելու մասին Խորհրդի 1991 թվականի հուլիսի 15-ի թիվ 91/414/ԵՏՀ հրահանգով նախատեսվող՝ որպես բույսերի պաշտպանության միջոցներ օգտագործվող թունաքիմիկատներ,

բ) այլ թունաքիմիկատներ, ինչպես օրինակ՝ «Բիոցիդների շուկայահանման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի փետրվարի 16-ի թիվ 98/8/ԵՀ հրահանգի համաձայն՝ բիոցիդներ (22) և ինչպես օրինակ՝ թիվ 2001/82/ԵՀ հրահանգով և թիվ 2001/83/ԵՀ հրահանգով նախատեսվող վարակազերծիչները, միջատասպան նյութերը և մակաբուժասպանները,

5. «արդյունաբերական քիմիկատներ» նշանակում է ստորև նշված ենթակատեգորիաներից որևէ մեկում քիմիական նյութեր՝

ա) մասնագետների կողմից օգտագործման համար նախատեսված քիմիական նյութեր,

բ) հանրության կողմից օգտագործման համար քիմիական նյութեր,

6. «արտահանման ծանուցման ենթակա քիմիական նյութ» նշանակում է Համայնքի տարածքում արգելված կամ խիստ սահմանափակված քիմիական նյութ մեկ կամ մի քանի կատեգորիաներում կամ ենթակատեգորիաներում կամ I հավելվածի 1-ին մասում թվարկված քիմիական նյութ, որն ընդգրկված է նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգում,

7. «նախնական հիմնավորված համաձայնության ծանուցման հավակնող քիմիական նյութ» նշանակում է մեկ կամ մի քանի կատեգորիաներում Համայնքի ներսում կամ անդամ պետությունում արգելված կամ խիստ սահմանափակված քիմիական նյութ: Մեկ կամ մի քանի կատեգորիաներում Համայնքի տարածքում արգելված կամ խիստ սահմանափակված քիմիական նյութերը ներկայացված են I հավելվածի 2-րդ մասում:

8. «նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգին ենթակա քիմիական նյութ» նշանակում է սույն Կանոնակարգի I հավելվածի 3-րդ մասում և Կոնվենցիայի III հավելվածում տրված քիմիական նյութ,

9. «արգելված քիմիական նյութ» նշանակում է ստորև նշվածից որևէ մեկը՝

ա) քիմիական նյութ, որի օգտագործումները մեկ կամ մի քանի կատեգորիաներում կամ ենթակատեգորիաներում արգելվել են Համայնքի կողմից վերջնական կարգավորիչ գործողությամբ՝ պաշտպանելու համար մարդու առողջությունը կամ շրջակա միջավայրը,

բ) քիմիական նյութ, որն առաջին անգամ օգտագործման համար չի հաստատվել կամ հանվել է ձեռնարկության կողմից կամ Համայնքի շուկայից կամ հետագա ուսումնասիրության համար ծանուցման, գրանցման կամ հաստատման գործընթացում և, եթե կան փաստեր, որ քիմիական նյութը մարդու առողջության կամ շրջակա միջավայրի համար վտանգ է ներկայացնում,

10. «խիստ սահմանափակված քիմիական նյութ» նշանակում է ստորև նշվածից որևէ մեկը՝

ա) քիմիական նյութ, որի գրեթե բոլոր օգտագործումները մեկ կամ մի քանի կատեգորիաներում կամ ենթակատեգորիաներում արգելվել են Համայնքի կողմից վերջնական կարգավորիչ գործողությամբ՝ պաշտպանելու համար մարդու առողջությունը կամ շրջակա միջավայրը, սակայն որոշակի կոնկրետ կիրառումների համար մնում է թույլատրելի,

բ) քիմիական նյութ, որը գրեթե բոլոր օգտագործումների համար չի հաստատվել կամ հանվել է ձեռնարկության կողմից կամ Համայնքի շուկայից կամ հետագա ուսումնասիրության համար ծանուցման, գրանցման կամ հաստատման գործընթացում և, եթե կան փաստեր, որ քիմիական նյութը մարդու առողջության կամ շրջակա միջավայրի համար վտանգ է ներկայացնում,

11. «անդամ պետության կողմից արգելված կամ խիստ սահմանափակված քիմիական նյութ» նշանակում է քիմիական նյութ, որն արգելված կամ խիստ սահմանափակված է անդամ պետության ազգային վերջնական կարգավորիչ գործողությամբ,

12. «վերջնական կարգավորիչ գործողություն» նշանակում է օրենսդրական ակտ, որի նպատակն արգելելը կամ քիմիական նյութը խիստ սահմանափակելն է,

13. «խիստ վտանգավոր թունաքիմիկատային խառնուրդ» նշանակում է որպես թունաքիմիկատ օգտագործելու համար կազմված քիմիական նյութ, որի ներգործությանը մեկ կամ բազմակի անգամ կարճաժամկետ ենթարկվելը լուրջ վնաս է հասցնում առողջության և շրջակա միջավայրի վրա,

14. «արտահանում» նշանակում է հետևյալը՝

ա) Պայմանագրի 23(2) հոդվածի պայմանները բավարարող քիմիական նյութի մշտական կամ ժամանակավոր արտահանում,

բ) Պայմանագրի 23(2) հոդվածի պայմանները չբավարարող քիմիական նյութի վերաարտահանում, որը ենթակա է Համայնքի մաքսային տարածքով ապրանքների տեղաշարժի համար Համայնքի տարանցիկ արտաքին ընթացակարգից բացի այլ մաքսային ռեժիմի:

15. «ներմուծում» նշանակում է այն քիմիական նյութի Համայնքի մաքսային տարածք ֆիզիկական ներմուծումը, որը ենթակա է Համայնքի մաքսային տարածքով ապրանքների տեղաշարժի համար Համայնքի տարանցիկ արտաքին ընթացակարգից բացի այլ մաքսային ռեժիմի,

16. «արտահանող» նշանակում է հետևյալ անձանցից որևէ մեկը՝ թե ֆիզիկական, թե իրավաբանական՝

ա) անձ, որի անունից կազմվում է արտահանման հայտարարագիր, այսինքն՝ անձ, ով հայտարարագրի ընդունման ժամանակ Կոնվենցիայի կողմ երկրում կամ այլ երկրում բեռն ստացողի հետ պայմանագիր է կնքել և իրավասու է որոշելու այն քիմիական նյութը, որը կարող է դուրս բերվել Համայնքի մաքսային տարածքից,

բ) եթե արտահանման պայմանագիր չի կնքվել կամ պայմանագիր կնքած կողմը չի գործում իր անունից, անձ, ով իրավասու է որոշել այն քիմիական նյութը, որը կարող է ուղարկվել Համայնքի մաքսային տարածքից,

գ) եթե քիմիական նյութը տնօրինելու իրավունքի առավելությունը պատկանում է Համայնքից դուրս տնտեսական գործունեություն իրականացնող անձին՝ համաձայն այն պայմանագրի, որի վրա հիմնված է արտահանումը, ապա Համայնքի տարածքում տնտեսական գործունեություն իրականացնող պայմանավորվող կողմը:

17.«ներմուծող» նշանակում է իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը Համայնքի մաքսային տարածք ներմուծելու ժամանակահատվածում քիմիական նյութերի բեռն ստացողն է,

18. «Կոնվենցիայի կողմ» կամ «Կողմ» նշանակում է պետություն կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպություն, որը Կոնվենցիայով պարտավորված լինելու վերաբերյալ համաձայնություն է հայտնել և որի համար Կոնվենցիան գործում է:

19. «այլ երկիր» նշանակում է ցանկացած Կողմ չհանդիսացող երկիր:

Հոդված 4

Նշանակված ազգային մարմինները

Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է մարմին կամ մարմիններ, այսուհետ՝ «նշանակված ազգային մարմին» կամ «նշանակված ազգային մարմիններ» սույն Կանոնակարգով պահանջվող վարչական գործառնություններն իրականացնելու նպատակով, եթե այն արդեն չի կատարել այն՝ մինչև սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելը:

Այն այդ նշանակման մասին Հանձնաժողովին տեղեկացնում է մինչև 2008 թվականի նոյեմբերի 1-ը:

Հոդված 5

Կոնվենցիայում Համայնքի մասնակցությունը

1. Կոնվենցիայում Համայնքի մասնակցությունը Հանձնաժողովի և անդամ պետությունների համատեղ պատասխանատվությունն է, մասնավորապես՝ տեխնիկական աջակցության, տեղեկատվության փոխանակման և վեճերի լուծմանն առնչվող խնդիրների, օժանդակ մարմիններում և քվեարկությունում մասնակցելու մասով:

2. Կոնվենցիայում Համայնքի մասնակցության մասով նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի և արտահանման մասին ծանուցման առնչությամբ Կոնվենցիայի վարչական գործառույթների համար Հանձնաժողովը գործում է որպես ընդհանուր նշանակված մարմին՝ անդամ պետությունների բոլոր նշանակված ազգային մարմինների անունից կամ դրանց հետ սերտ համագործակցությամբ և խորհրդատվությամբ:

Հանձնաժողովը, մասնավորապես, պատասխանատու է ստորև նշվածի համար՝

ա) 7-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերին և մյուս երկրներին Համայնքի արտահանման ծանուցումների փոխանցում,

բ) Կոնվենցիայի քարտուղարությանը, այսուհետ՝ «Քարտուղարություն», 10-րդ հոդվածի համաձայն՝ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի ենթակա քիմիական նյութերին վերաբերող վերջնական կարգավորիչ համապատասխան գործողությունների մասին ծանուցումներ ներկայացնելը,

գ) 11-րդ հոդվածի համաձայն՝ նախնական հիմնավորված համաձայնության ծանուցմանը ոչ ենթակա քիմիական նյութեր ներառող՝ այլ վերջնական կարգավորիչ գործողություններին վերաբերող տեղեկությունները փոխանցելը,

դ) առավել ընդհանուր Քարտուղարությունից տեղեկություններ ստանալը:

Հանձնաժողովը Քարտուղարությանը նույնպես տրամադրում է 12-րդ հոդվածի համաձայն նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգին ենթակա քիմիական նյութերի համար Համայնքի ներմուծման մասին որոշումները:

Ավելին, Հանձնաժողովը համակարգում է հետևյալի հետ կապված բոլոր տեխնիկական խնդիրների շուրջ Համայնքի ներդրումը՝

ա) Կոնվենցիա,

բ) Կոնվենցիայի 18-րդ հոդվածով սահմանված՝ Կողմերի համաժողովի նախապատրաստում,

գ) Կոնվենցիայի 18(6) հոդվածի համաձայն սահմանված՝ Քիմիական նյութերի հարցերով զնահատման կոմիտե,

դ) այլ օժանդակ մարմիններ:

Անհրաժեշտության դեպքում անդամ պետության զեկուցողների ցանց՝ Կոնվենցիայի 7(3) հոդվածում նշված հրահանգային փաստաթղթերի վարման համար:

3. Հանձնաժողովը և անդամ պետություններն անհրաժեշտ նախաձեռնություն են հանդես բերում՝ Կոնվենցիան իրականացնող տարբեր մարմիններում Համայնքի պատշաճ ներկայացուցչությունն ապահովելու նպատակով:

Հոդված 6

Արտահանման մասին ծանուցմանը ենթակա քիմիական նյութեր, նախնական հիմնավորված համաձայնության ծանուցման հավակնող քիմիական նյութեր և նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգին ենթակա քիմիական նյութեր

1. Արտահանման մասին ծանուցման, նախնական հիմնավորված համաձայնության ծանուցման և նախնական հիմնավորված համաձայնության ծանուցման ընթացակարգի հետ կապված, համապատասխանաբար, սույն Կանոնակարգի դրույթներով նախատեսվող քիմիական նյութերը ներկայացված են I հավելվածում:

2. I հավելվածի քիմիական նյութերը վերագրվում են I հավելվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում սահմանված քիմիական նյութերի երեք խմբից որևէ մեկին կամ մի քանիսին:

I հավելվածի 1-ին մասում թվարկված քիմիական նյութերը ենթակա են 7-րդ հոդվածում սահմանված արտահանման ծանուցման ընթացակարգին, որտեղ մանրամասն տեղեկություններ են ներկայացվում նյութի առանձնահատկությունների, սահմանափակման ենթակա կատեգորիաների և (կամ) ենթակատեգորիաների օգտագործման, սահմանափակման տեսակի մասին և, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ տեղեկություններ, մասնավորապես, արտահանման մասին ծանուցման համար պահանջների կատարումից ազատվելու դեպքերի մասին:

I հավելվածի 2-րդ մասում ներկայացված քիմիական նյութերի նկատմամբ, ի հավելումն 7-րդ հոդվածում սահմանված արտահանման մասին ծանուցման ընթացակարգի, կիրառվում է նաև 10-րդ հոդվածում սահմանված նախնական հիմնավորված համաձայնության ծանուցման ընթացակարգը, որտեղ մանրամասն տեղեկություններ են ներկայացվում նյութի առանձնահատկության և օգտագործման կատեգորիայի մասին:

I հավելվածի 3-րդ մասում ներկայացվող քիմիական նյութերը ենթակա են նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգին, որտեղ տրված է օգտագործման կատեգորիան և, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ տեղեկություններ, մասնավորապես, արտահանման ծանուցման համար պահանջների մասին:

3. 2-րդ պարբերության մեջ նշված ցանկերը հանրամատչելի են էլեկտրոնային տարբերակով:

Հոդված 7

Կողմերին և այլ երկրներին ներկայացվող արտահանման մասին ծանուցումները

1. I հավելվածի 1-ին մասում թվարկված նյութերից բացի կամ այնպիսի խտությամբ այնպիսի նյութեր պարունակող պրեպարատներ, որոնք, անկախ այլ նյութերի առկայությունից, թիվ 1999/45/ԵՇ կանոնակարգի համաձայն, կարող են պիտակավորման պարտավորություններ առաջացնել, կիրառվում են 2-8-րդ պարբերությունները:

2. Եթե արտահանողը 1-ին պարբերությունում նշված քիմիական նյութը պետք է Համայնքից որևէ Կողմի տարածք կամ այլ երկիր արտահանի առաջին անգամ այն ամսաթվին կամ այն ամսաթվից հետո, երբ այն կարգավորվում է սույն Կանոնակարգով, ապա նա ծանուցում է այն անդամ պետության նշանակված ազգային մարմնին, որտեղ նա տնտեսական գործունեություն է իրականացնում ոչ ուշ, քան քիմիական նյութն արտահանելուց 30 օր առաջ: Այնուհետև արտահանողը ծանուցում է նշանակված ազգային մարմնին նման քիմիական նյութն առաջին անգամ արտահանելու մասին յուրաքանչյուր օրացուցային տարի ոչ ուշ, քան արտահանումից 15 օր հետո: Ծանուցումը պետք է համապատասխանի II հավելվածում սահմանված պահանջներին:

Նշանակված ազգային մարմինը ստուգում է II հավելվածի հետ տեղեկությունների համապատասխանությունը և Հանձնաժողով է անմիջապես ուղարկում արտահանողից ստացված ծանուցումը:

Հանձնաժողովը նախաձեռնում է միջոցներ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ներմուծող Կողմի նշանակված ազգային մարմինը կամ մեկ այլ ներմուծող երկրի համապատասխան մարմինը ծանուցումն ստանան 15 օրից ոչ ուշ՝ մինչ քիմիական նյութի առաջին անգամ մտադրված արտահանումը և դրանից հետո հետագա օրացուցային տարում առաջին արտահանումից առաջ: Դա կիրառվում է անկախ արտահանող Կողմի տարածքում կամ այլ երկրում քիմիական նյութի ակնկալվող օգտագործման հանգամանքից:

Յուրաքանչյուր արտահանման մասին ծանուցումը գրանցվում է և դրան Հանձնաժողովի տվյալների շտեմարանում տրվում է արտահանման նույնականացման համար. և յուրաքանչյուր օրացուցային տարվա համար համապատասխան քիմիական նյութերի ու ներմուծող Կողմերի և այլ երկրների արդիականացված ցանկը պետք է մատչելի լինի հանրությանը և բաշխվի, անհրաժեշտության դեպքում, անդամ պետությունների նշանակված ազգային մարմիններին:

3. Եթե Հանձնաժողովը հաստատում չի ստանում ներմուծող Կողմից կամ այլ երկրից առաջին արտահանման ծանուցման ստացման մասին, այդ ծանուցումն ուղարկելուց հետո 30 օրվա ընթացքում I հավելվածի 1-ին մասում քիմիական նյութը ներառելուց հետո այն երկրորդ ծանուցումն է ներկայացնում: Հանձնաժողովը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ ներմուծող Կողմի նշանակված ազգային մարմինը կամ մեկ այլ ներմուծող երկրի համապատասխան մարմին ստանա երկրորդ ծանուցումը:

4. 2-րդ պարբերությամբ նախատեսվող նոր արտահանման մասին ծանուցումը տրվում է այն արտահանումների համար, որոնք տեղի են ունենում համապատասխան նյութերի շուկայահանման, օգտագործման կամ պիտակավորման վերաբերյալ Համայնքի օրենսդրության մեջ փոփոխություններից հետո կամ երբ համապատասխան պրեպարատի կազմը փոփոխվում է այնպես, որ նման պրեպարատի պիտակավորումը փոփոխվում է: Նոր ծանուցումը համապատասխանում է II հավելվածում սահմանված պահանջներին և դրանում նշվում է, որ դա նախորդ ծանուցման վերանայված տարբերակն է:

5. Եթե քիմիական նյութի արտահանումը կապված է արտակարգ իրավիճակի հետ, որտեղ ցանկացած ուշացում կարող է վնաս հասցնել մարդու առողջությանը կամ շրջակա միջավայրին ներմուծող երկրում կամ այլ երկրում, 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերությունների պահանջները կարող են մասամբ կամ ամբողջությամբ չկիրառվել արտահանող անդամ պետության նշանակված ազգային մարմնի հայեցողությամբ՝ Հանձնաժողովի հետ խորհրդակցությամբ:

6. 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններում սահմանված պարտավորությունները դադարում են, եթե կատարվում են ներքոհիշյալ պայմանները՝

ա) քիմիական նյութը դարձել է նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգին ենթակա քիմիական նյութ,

բ) Կոնվենցիայի Կողմ հանդիսացող ներմուծող երկիրը, Կոնվենցիայի 10(2) հոդվածի համաձայն, Քարտուղարությանը պատասխան է տրամադրել՝ նշելով այն, թե արդյոք այն իր համաձայնությունն է տալիս քիմիական նյութի արտահանման համար,

գ) Հանձնաժողովը տեղեկացվել է Քարտուղարության կողմից այդ պատասխանի մասին, և այդ տեղեկությունները ուղարկել են անդամ պետություններ:

Առաջին ենթապարբերությունը չի կիրառվում, եթե Կոնվենցիայի Կողմ հանդիսացող ներմուծող երկիրը հստակ պահանջում է արտահանող կողմերի կողմից շարունակական արտահանման ծանուցում, օրինակ՝ արտահանման մասին որոշման միջոցով կամ այլ կերպ:

2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններում սահմանված պարտավորությունները նույնպես դադարում են, եթե կատարվում են ներքոհիշյալ պայմանները՝

ա) Ներմուծող Կողմի նշանակված ազգային մարմինը կամ մեկ այլ ներմուծող երկրի համապատասխան մարմինը՝ մինչև քիմիական նյութի արտահանումը, չի կատարել ծանուցման պահանջը,

բ) Հանձնաժողովը Քարտուղարությունից կամ ներմուծող Կողմի նշանակված ազգային մարմնից կամ մեկ այլ ներմուծող երկրի համապատասխան մարմնից տեղեկություններ է ստացել և ուղարկել դրանք անդամ պետություններ ու մատչելի դարձրել համացանցում:

7. Հանձնաժողովը, անդամ պետությունների համապատասխան նշանակված ազգային մարմինները և արտահանողները ներմուծող կողմերին և մյուս երկրներին, ըստ պահանջի, արտահանվող քիմիական նյութերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ են տրամադրում:

8. Անդամ պետությունները կարող են սահմանել համակարգեր, որոնցով արտահանողները կպարտավորվեն յուրաքանչյուր տրված արտահանման ծանուցման և հստակ տրված համաձայնության համար յուրաքանչյուր դիմումի համար վարչական վճարներ կատարել, որոնք համապատասխանում են սույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններով և 13(3), (6) և (7) հոդվածով սահմանված ընթացակարգերն իրականացնելու համար անհրաժեշտ ծախսերին:

Հոդված 8

Կողմերից և այլ երկրներից ստացվող արտահանման մասին ծանուցումները

1. Այն քիմիական նյութերի վերաբերյալ Համայնք կատարվող արտահանման վերաբերյալ Կողմերի նշանակված ազգային մարմիններից կամ այլ երկրների համապատասխան երկրներից Հանձնաժողովի կողմից ստացվող արտահանման ծանուցումները, որոնց արտադրությունը, օգտագործումը, սպառումը, փոխադրումը կամ վաճառքը ենթակա է արգելման կամ խիստ սահմանափակման՝ այդ Կողմի կամ այլ երկրի օրենսդրության համաձայն, մատչելի է էլեկտրոնային տարբերակով՝ Հանձնաժողովի կողմից վարվող տվյալների շտեմարանի միջոցով:

Հանձնաժողովը հաստատում է յուրաքանչյուր Կողմից կամ այլ երկրից յուրաքանչյուր քիմիական նյութի համար ստացվող առաջին արտահանման ծանուցումն ստանալու մասին:

Այդ ներմուծված արտադրանքն ստացող անդամ պետության նշանակված ազգային մարմինը ամբողջ մատչելի տեղեկատվության հետ մեկտեղ ցանկացած ծանուցման կրկնօրինակն է ստանում: Այլ անդամ պետություններ կարող են, դիմումի համաձայն, կրկնօրինակներ ստանալ:

2. Եթե անդամ պետությունների նշանակված ազգային մարմինները Կողմերի նշանակված ազգային մարմիններից կամ այլ երկրների համապատասխան մարմիններից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանում են արտահանման ծանուցումներ, դրանք այդ ծանուցումներն անմիջապես ուղարկում են Հանձնաժողով՝ մատչելի ամբողջ տեղեկատվության հետ միասին:

Հոդված 9

Քիմիական նյութերի արտահանման և ներմուծման մասին տեղեկությունները

1. Ստորև նշվածի յուրաքանչյուր արտահանող՝

- I հավելվածում նշված նյութերը,

- այնպիսի խտությամբ այնպիսի նյութեր պարունակող պրեպարատներ, որոնք ցանկացած այլ նյութի առկայությամբ, թիվ 1999/45/ԵՀ Հրահանգի համաձայն, կարող են պիտակավորման պարտավորություններ առաջացնել,

- քիմիական ռեակցիաների մեջ չմտած I հավելվածի 2-րդ կամ 3-րդ մասերում նշված նյութեր պարունակող արտադրանք կամ այնպիսի խտությամբ այնպիսի նյութեր պարունակող պրեպարատներ, որոնք կարող են անկախ ցանկացած այլ նյութի առկայության, թիվ 1999/45/ԵՀ Հրահանգի համաձայն պիտակավորման պարտավորություններ առաջացնել:

յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակում իր անդամ պետության նշանակված ազգային մարմնին տեղեկացնել քիմիական նյութի քանակության մասին, որպես նախորդ տարվա ընթացքում յուրաքանչյուր Կողմ կամ այլ երկիր առաքվող՝ որպես նյութ կամ պրեպարատների կամ արտադրանքի բաղադրիչ մաս: Այդ տեղեկությունները տրամադրվում են յուրաքանչյուր ներմուծողի անունների և հասցեների ցանկի հետ միասին, որին առաքումը կատարվել է նույն ժամանակահատվածում: Այդ տեղեկությունների մեջ, 13(7) հոդվածի համաձայն, ներկայացնում են առանձին արտահանումներ:

Համայնքի տարածքում յուրաքանչյուր ներմուծող միևնույն տեղեկությունն է տրամադրում Համայնք ներմուծվող քանակության համար:

2. Հանձնաժողովի կամ իր անդամ պետության նշանակված ազգային մարմնի դիմումի համաձայն՝ արտահանողը կամ ներմուծողը քիմիական նյութերի հետ կապված լրացուցիչ տեղեկություններ է տրամադրում, որոնք անհրաժեշտ են՝ սույն Կանոնակարգն իրականացնելու համար:

3. Յուրաքանչյուր անդամ պետություն, III հավելվածի համաձայն, Հանձնաժողովին համախմբված տեղեկություններ է տրամադրում: Հանձնաժողովն ամփոփում է այդ տեղեկությունները Համայնքի մակարդակով և համացանցի միջոցով իր տվյալների շտեմարանում գետեղում է կոնֆիդենցիալ չհամարվող տեղեկությունները:

Հոդված 10

Կոնվենցիայի համաձայն արգելված կամ խիստ սահմանափակված քիմիական նյութերի մասին ծանուցելը

1. Հանձնաժողովը Քարտուղարությանը գրավոր ծանուցում է այն քիմիական նյութերի մասին, որոնք պետք ենթարկվեն նախնական հիմնավորված համաձայնության:

2. Եթե այլ քիմիական նյութեր ենթակա են նախնական հիմնավորված համաձայնության ծանուցման և ավելացվում են I հավելվածի 2-րդ մասում, Հանձնաժողովը ծանուցում է Քարտուղարությանը: Ծանուցումը հնարավորինս վաղ ներկայացվում է քիմիական նյութն արգելելու կամ խիստ սահմանափակելու մասին Համայնքի համապատասխան վերջնական կարգավորիչ գործողության ընդունումից հետո և ոչ ուշ, քան այն ամսաթվից 90 օր հետո, երբ այդ վերջնական կարգավորիչ գործողությունը պետք է կիրառվի:

3. Ծանուցման մեջ պետք է առկա լինեն IV հավելվածով պահանջվող բոլոր համապատասխան տեղեկությունները:

4. Ծանուցումների համար գերակայություններ սահմանելիս Հանձնաժողովը հաշվի է առնում այն, թե արդյոք քիմիական նյութն արդեն ներկայացված է I հավելվածի 3-րդ մասում, այն, թե որքանով IV հավելվածում սահմանված տեղեկատվության նկատմամբ պահանջները կարող են բավարարվել և քիմիական նյութի կողմից ներկայացվող վտանգների լրջությունը, մասնավորապես, զարգացող երկրների համար:

Եթե քիմիական նյութը պետք է ենթարկվի նախնական հիմնավորված համաձայնության ծանուցման, սակայն տեղեկությունները բավարար չեն՝ IV հավելվածում սահմանված պահանջները բավարարելու համար, ապա սահմանված արտահանողները կամ ներմուծողները, Հանձնաժողովի դիմումի համաձայն, տրամադրում են իրենց մատչելի բոլոր համապատասխան տեղեկությունները, այդ թվում նաև՝ քիմիական նյութերի վերահսկողության այլ ազգային կամ միջազգային ծրագրերից՝ դիմումը ներկայացնելուց հետո 60 օրվա ընթացքում:

5. Հանձնաժողովը գրավոր ծանուցում է Քարտուղարությանը, եթե 1-ին կամ 2-րդ պարբերությունների համաձայն՝ ծանուցված վերջնական կարգավորիչ գործողությունը հնարավորինս վաղ փոփոխվում է՝ նոր վերջնական կարգավորիչ գործողության ընդունումից հետո և ոչ ուշ, քան 60 օր այն ամսաթվից հետո, երբ պետք է կիրառվի նոր վերջնական կարգավորիչ գործողությունը:

Հանձնաժողովը տրամադրում է ամբողջ համապատասխան տեղեկությունները, որոնք մատչելի չեին այն ժամանակ, երբ նախնական ծանուցում է տրվել՝ համապատասխանաբար 1-ին կամ 2-րդ պարբերությունների համաձայն:

6. Որևէ Կողմից կամ Քարտուղարությունից դիմումի դեպքում Հանձնաժողովը հնարավորության դեպքում քիմիական նյութի կամ վերջնական կարգավորիչ գործողության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ է տրամադրում:

Անդամ պետությունները, դիմումի համաձայն, անհրաժեշտության դեպքում, օժանդակում են այդ տեղեկությունները կուտակելու հարցում:

7. Հանձնաժողովն անմիջապես ուղարկում է անդամ պետություններ այլ Կողմերի կողմից արգելված կամ խիստ սահմանափակված քիմիական նյութերի մասին Քարտուղարությունից ստացված տեղեկությունները:

Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում գնահատում է անդամ պետությունների հետ սերտ համագործակցությամբ Համայնքի մակարդակով միջոցներ առաջարկելու անհրաժեշտությունը՝ Համայնքի տարածքում մարդու առողջությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող չսպասված վտանգները կանխելու նպատակով:

8. Եթե անդամ պետությունն ազգային մակարդակով վերջնական կարգավորիչ գործողություն է նախաձեռնում՝ Համայնքի համապատասխան օրենսդրության համաձայն արգելելու կամ խիստ սահմանափակելու քիմիական նյութը, այն Հանձնաժողովին համապատասխան տեղեկություններ է տրամադրում: Հանձնաժողովն այս տեղեկությունը մատչելի պետք է դարձնի այլ անդամ պետությունների համար: Այդ տեղեկությունները մատչելի դառնալուց հետո չորս շաբաթվա ընթացքում անդամ պետությունները կարող են մեկնաբանություններ ուղարկել նախնական հիմնավորված համաձայնության հնարավոր ծանուցման մասին, այդ թվում նաև, մասնավորապես, քիմիական նյութի մասով իրենց ազգային կարգավորիչ դիրքորոշման մասին համապատասխան տեղեկություններ Հանձնաժողովին և անդամ պետություններին, որոնք ներկայացրել են ազգային վերջնական կարգավորիչ գործողությունը: Մեկնաբանություններն ուսումնասիրելուց հետո տեղեկություններ ներկայացնող անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են այն մասին, թե արդյոք վերջինս՝

- ծանուցում է Քարտուղարությանը սույն Հոդվածի համաձայն, կամ
- տեղեկություններ է տրամադրում Քարտուղարությանը՝ 11-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 11

Նախնական հիմնավորված համաձայնության ծանուցման ենթակա արգելված կամ խիստ սահմանափակված քիմիական նյութերի վերաբերյալ Քարտուղարությանը փոխանցվող տեղեկությունները

Եթե I հավելվածի 1-ին մասում թվարկված քիմիական նյութը կամ 10(8) հոդվածի երկրորդ պարբերության նպատակներով անդամ պետությունից տեղեկություններն ստանալուց հետո Հանձնաժողովը Քարտուղարությանը համապատասխան վերջնական կարգավորիչ գործողությունների վերաբերյալ տեղեկություններ է տրամադրում, որպեսզի այդ տեղեկությունները հարկ եղած դեպքում հնարավոր լինի տարածել Կոնվենցիայի մյուս Կողմերի շրջանում:

Հոդված 12

Քիմիական նյութերի արտահանումների մասով պարտավորությունները

1. Հանձնաժողովն անմիջապես ուղարկում է անդամ պետություններ այն հրահանգային փաստաթղթերը, որ նա ստացել է Քարտուղարությունից:

Հանձնաժողովը, 24(2) հոդվածում նշված խորհրդատվական ընթացակարգի համաձայն, ներմուծման մասին որոշում է ընդունում Համայնքի անունից վերջնական կամ միջանկյալ ներմուծման մասին պատասխանի ձևով՝ համապատասխան քիմիական նյութի հետագա արտահանման վերաբերյալ: Այն այնուհետև այդ որոշումը ներկայացնում է Քարտուղարությանը հնարավորինս շտապ և ոչ ուշ, քան Քարտուղարության կողմից հրահանգային փաստաթուղթն ուղարկելուց հետո ինն ամիս հետո:

Եթե քիմիական նյութը ենթակա է Համայնքի օրենսդրության համաձայն լրացուցիչ կամ փոփոխված սահմանափակումների, ապա Հանձնաժողովը վերանայում է ներմուծման մասին որոշումը՝ 24(2) հոդվածում նշված խորհրդատվական ընթացակարգի համաձայն և Քարտուղարություն է ներկայացնում ներմուծման մասին վերանայված որոշումը:

2. Մեկ կամ մի քանի անդամ պետությունների կողմից արգելված կամ խիստ սահմանափակված քիմիական նյութի դեպքում Հանձնաժողովը, շահագրգիռ անդամ պետությունների գրավոր դիմումի համաձայն, տեղեկությունները հաշվի է առնում իր ներմուծման մասին որոշման մեջ:

3. Առաջին պարբերության համաձայն՝ ներմուծման մասին ցանկացած որոշում առնչվում է հրահանգային փաստաթղթում քիմիական նյութի համար սահմանված կատեգորիային կամ կատեգորիաներին:

4. Քարտուղարությանը ներմուծման մասին որոշումը ներկայացնելիս՝ Հանձնաժողովը տրամադրում է օրենսդրական կամ վարչական միջոցների նկարագրություն, որի վրա այն հիմնված է:

5. Համայնքի տարածքում յուրաքանչյուր նշանակված ազգային մարմին շահագրգիռ կողմերին մատչելի է դարձնում 1-ին պարբերության համաձայն ներմուծման մասին որոշումները՝ իրենց իրավասության շրջանակներում, իր օրենսդրական կամ վարչական միջոցների համաձայն:

6. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում գնահատում է անդամ պետությունների հետ սերտ համագործակցությամբ Համայնքի մակարդակով միջոցներ առաջարկելու անհրաժեշտությունը՝ Համայնքի տարածքում մարդու առողջությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող չսպասված վտանգները կանխելու նպատակով՝ հաշվի առնելով հրահանգային փաստաթղթում տրված տեղեկությունները:

Հոդված 13

Արտահանման մասին ծանուցման պահանջներից բացի՝ քիմիական նյութերի արտահանումների հետ կապված պարտավորությունները

1. Հանձնաժողովն անդամ պետություններ և Եվրոպական արդյունաբերական ասոցիացիաներ անմիջապես ուղարկում է իր կողմից ստացվող տեղեկությունները՝ կամ շրջաբերականների, կամ այլ ձևով, Քարտուղարությունից նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգին ենթակա քիմիական նյութերի վերաբերյալ և այդ քիմիական նյութերի նկատմամբ կիրառվող ներմուծման վերաբերյալ պայմանների մասին ներմուծող Կողմերի որոշումները: Այն նաև Կոնվենցիայի 10(2) հոդվածի համաձայն՝ պատասխան ներկայացնել չկարողանալու դեպքերի վերաբերյալ տեղեկություններ է անմիջապես ուղարկում անդամ պետություններ: Հանձնաժողովը պահում է ներմուծման մասին որոշումների վերաբերյալ բոլոր տեղեկությունները, որից յուրաքանչյուրին տրվում է իր տվյալների շտեմարանում առկա ներմուծման որոշման մասին նույնականացման համար, որը պետք է զետեղվի համացանցում և, ըստ պահանջի, յուրաքանչյուրին ներկայացնի այդ տեղեկությունները:

2. Հանձնաժողովը Եվրոպական Համայնքի միասնական անվանացանկի I հավելվածում ներկայացված յուրաքանչյուր քիմիական նյութին դասակարգում է տալիս: Համապատասխան քիմիական նյութերի համար Համաշխարհային մաքսային կազմակերպության ներդաշնակեցված համակարգի անվանացանկում կամ Եվրոպական Համայնքի միասնական անվանացանկում կատարվող ցանկացած փոփոխության դեպքում այդ դասակարգումներն անհրաժեշտ է վերանայել:

3. Յուրաքանչյուր անդամ պետություն, իր իրավասության շրջանակներում, Հանձնաժողովի կողմից ներկայացվող պատասխանները, 1-ին պարբերության համաձայն, ուղարկում է շահագրգիռ կողմերին:

4. Արտահանողները կատարում են յուրաքանչյուր ներմուծման մասին պատասխանի մեջ առկա որոշումները ոչ ուշ, քան վեց ամիս այդ պատասխանի մասին, 1-ին պարբերության համաձայն, Քարտուղարության կողմից Հանձնաժողովին տեղեկացնելուց հետո:

5. Հանձնաժողովը և անդամ պետությունները խորհրդատվություն են մատուցում և օժանդակում ներմուծող Կողմերին՝ դիմումի համաձայն և, անհրաժեշտության դեպքում, տվյալ քիմիական նյութի ներմուծման մասին՝ Քարտուղարությանը պատասխան ներկայացնելու հարցում նրանց օգնելու համար լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով:

6. I հավելվածի 2-րդ կամ 3-րդ մասերում ներկայացված նյութերը կամ այնպիսի խտությամբ այնպիսի նյութեր պարունակող պրեպարատները, որոնք որևէ այլ նյութի առկայությունից անկախ, թիվ 1999/45/ԵՀ հրահանգի համաձայն, կարող են պիտակավորման մասով պարտավորություններ առաջացնել, արտահանվում են միայն ստորև նշված պայմաններից որևէ մեկը կատարելու դեպքում՝

ա) արտահանողի կողմից պահանջված և ստացված ներմուծման հստակ համաձայնություն՝ Հանձնաժողովի նշանակած ազգային մարմնի և ներմուծող Կողմի նշանակած ազգային մարմնի միջոցով կամ ներմուծող այլ երկրի համապատասխան երկրի հետ խորհրդակցությամբ,

բ) I հավելվածի 3-րդ մասում թվարկված քիմիական նյութերի դեպքում Քարտուղարության կողմից թողարկված ամենավերջին շրջաբերականում, 1-ին պարբերության համաձայն, նշվում է, որ ներմուծող Կողմը ներմուծման իր համաձայնությունն է տվել:

I հավելվածի 2-րդ մասում թվարկված այն քիմիական նյութերի դեպքում, որոնք պետք է արտահանվեն ՏՀԶԿ երկրներ, արտահանողը կարող է Հանձնաժողովի հետ խորհրդակցությամբ և կոնկրետ դեպքերից ելնելով որոշել, որ ոչ մի հստակ համաձայնություն չի պահանջվում, եթե քիմիական նյութը շահագրգիռ ՏՀԶԿ երկիր ներմուծման ժամանակ լիցենզավորված է, գրանցված կամ թույլ է տրված տվյալ ՏՀԶԿ երկրում:

Եթե հստակ համաձայնություն է պահանջվել (ա) կետի համաձայն, եթե Հանձնաժողովը կամ արտահանողի նշանակված ազգային մարմինը չի ստացել իր դիմումի պատասխանը 30 օրվա ընթացքում, ապա Հանձնաժողովը հիշեցում է ուղարկում: Անհրաժեշտության դեպքում, եթե հաջորդ 30 օրվա ընթացքում դեռ պատասխան չկա, Հանձնաժողովը հարկ եղած դեպքում կարող է լրացուցիչ հիշեցումներ ուղարկել:

7. I հավելվածի 2-րդ կամ 3-րդ մասերում թվարկված քիմիական նյութերի դեպքում արտահանողի նշանակված ազգային մարմինը Հանձնաժողովի հետ խորհրդակցությամբ և կոնկրետ դեպքից ելնելով, որոշում է, որ արտահանումը կարող է շարունակվել, եթե բոլոր խելամիտ ջանքերից հետո 6-րդ պարբերության (ա) կետի համաձայն հստակ համաձայնության համար դիմելու համար ոչ մի պատասխան չի ստացվել 60 օրվա ընթացքում և ներմուծող կամ այլ երկրի պաշտոնական աղբյուրներից կան փաստեր, որ քիմիական նյութը լիցենզավորվել, գրանցվել կամ թույլ է տրվել:

I հավելվածի 3-րդ մասում թվարկված քիմիական նյութերի արտահանման մասին որոշում կայացնելիս Հանձնաժողովի հետ խորհրդակցությամբ նշանակված ազգային մարմինն ուսումնասիրում է մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա ներմուծող երկրում կամ այլ երկրում քիմիական նյութի օգտագործման հնարավոր ազդեցությունը:

8. 6(ա) պարբերության համաձայն ստացվող յուրաքանչյուր հստակ համաձայնության կամ 7-րդ պարբերության համաձայն պահանջները չկատարելու համար շնորհված թույլտվության վավերությունը ենթակա է Հանձնաժողովի կողմից պարբերաբար վերանայման՝ շահագրգիռ անդամ պետության հետ խորհրդակցելով հետևյալ կերպ՝

ա) 6(ա) պարբերության համաձայն ստացվող յուրաքանչյուր հստակ համաձայնության համար համաձայնությունը տալուց հետո երրորդ օրացուցային տարվա ավարտին պահանջվում է նոր հստակ համաձայնություն, եթե այդ համաձայնության պայմաններով այլ բան չի նախատեսվում,

բ) եթե այդ ընթացքում դիմումի պատասխան չի ստացվել, ապա 7-րդ պարբերության համաձայն տրված՝ պարտավորությունները չկատարելու թույլտվությունը նախատեսվում է առավելագույնը 12 ամսով, ինչի ավարտին պահանջվում է հստակ համաձայնություն:

Սույն պարբերության (ա) կետում նշված դեպքերում արտահանումները, այնուհանդերձ, կարող են շարունակվել համապատասխան ժամկետի լրացման ավարտին՝ չստանալով հստակ համաձայնության համար նոր դիմումի պատասխան՝ լրացուցիչ 12 ամիս ժամկետով:

Բոլոր նոր դիմումներն ուղարկվում են Հանձնաժողովի միջոցով:

9. Հանձնաժողովն իր տվյալների շտեմարանում է գրանցում հստակ համաձայնության համար բոլոր դիմումները, ստացվող պատասխանները և ներկայացված պահանջները չկատարելու թույլտվությունը: Ստացվող կամ մերժվող յուրաքանչյուր հստակ համաձայնության համար տրվում է հստակ համաձայնության նույնականացման համար և բոլոր պայմանների, վավերականության ժամկետների վերաբերյալ համապատասխան բոլոր տեղեկությունները ներկայացվում են: Ոչ կոնֆիդենցիալ համարվող տեղեկությունները զետեղվում են Համացանցում:

10. Քիմիական նյութերը չեն կարող արտահանվել ոչ ուշ, քան վեց ամիս իրենց պիտանիության ժամկետից հետո, եթե նման ժամկետ սահմանված է կամ կարող է ենթադրվել արտադրության ժամկետից, եթե քիմիական նյութին բնորոշ հատկանիշներից ելնելով՝ դա գործնականում հնարավոր չէ իրականացնել: Մասնավորապես, թունաքիմիկատների դեպքում արտահանողներն ապահովում են, որ տարաների չափը և փաթեթավորումն օպտիմալացվի՝ նվազագույնի հասցնելու համար ապրանքների հին տեսականիների առաջացման վտանգները:

11. Թունաքիմիկատներ արտահանելիս արտահանողներն ապահովում են, որ պիտակի վրա նշվեն արտահանող Կոդմի կամ այլ երկրի կլիմայական պայմանների ներքո պահման պայմանների և պահման ժամկետի մասին կոնկրետ տեղեկություններ: Ի հավելումն դրա՝ նրանք պետք է ապահովեն, որ արտահանվող թունաքիմիկատները համապատասխանեն Համայնքի օրենսդրությունում սահմանված արդյունաբերական մաքրության մասին տեխնիկական պայմաններին:

Հոդված 14

Կոնկրետ քիմիական նյութերի և քիմիական նյութեր պարունակող արտադրանքի արտահանումը

1. Քիմիական ռեակցիաների մեջ չմտած I հավելվածի 2-րդ կամ 3-րդ մասերում նշված նյութեր պարունակող արտադրանք կամ այնպիսի խտությամբ այնպիսի նյութեր պարունակող պրեպարատներ, որոնք կարող են, անկախ ցանկացած այլ նյութի առկայության, 1999/45/ԵՀ հրահանգի համաձայն պիտակավորման մասով պարտավորություններ առաջացնել, ենթակա են 7-րդ հոդվածում սահմանված արտահանման ծանուցման ընթացակարգին:

